ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/158

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Արարատ Բաղալյան Սերգուշի (պետական գրանցման համար 44.1104196),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ Ա/Ձ Արարատ Բաղալյան Սերգուշին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրության հիման վրա, 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արարատ Բաղալյան Սերգուշին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արարատ Բաղալյան Սերգուշի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն 23.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ 1-ին չափաբաժնով մասնակցել է ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգին, այնուհետև ստացել է արձանագրություն, որ Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ի գնային առաջարկը ավելի բարձր է և շահող կողմ չի հանդիսանում, սակայն պահանջել են հավելված 1.1-ի շտկում: Շտկումը կատարվել և ուղարկվել է, սակայն չի համապատասխանել Պատվիրատուի կողմից նախանշված պայմաններին: Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն հայտնել է, որ իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրն իր պարամետրերով եղել է ավելի բարձր քան պահանջվածն է: Միաժամանակ հայտնել է, որ ապրանքանիշի նշանը չի նշվել, քանի որ մակնիշի սյունակում ներկայացված է ամբողջական անվանումն ու սերիան:

Ամփոփելով՝ Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն խնդրել է ներողամիտ լինել և սխալը դիտարկել որպես անփութություն, քանի որ չհանդիսանալով ցածր գին առաջարկող, չի նշել սպասարկման կենտրոնի հասցեն:

Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/158 ընթացակարգի շրջանակներում 30.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի հունիսի 23-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար չափաբաժիններով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասնակից Արարատ Բաղալյան Սերգուշի անհատ ձեռներեցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի

մեջ (հավելված 1.1) առկա են եղել անհամապատասխանություններ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ մասնակցին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Արարատ Բաղալյան Սերգուշի անհատ ձեռներեցի կողմից անհամապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և Կարգի 45-րդ կետը՝ կից ներկայացնում է վերը նշված մասնակցի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/158 ընթացակարգի շրջանակներում 30.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020

գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ի 23.07.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>*** ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ ***<u>հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):</u>***

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են

հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2020թ. նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ՝ (Հավելված 1.1) նշված չեն ապրանքի ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշված «սառեցման աստիճանը (Ց)՝ առավելագույնը -18°» չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին «սառեցման աստիճանը (Ց)՝ առավելագույնը -16°»: Մասնակցի կողմից չի ներկայացվել նաև հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրել է, որ Մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել, որի հիման վրա, Կարգի 42-րդ կետի համաձայն, մերժվել է վերջինիս հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը սույն ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ստացել է արձանագրություն, համաձայն որի Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ի գնային առաջարկը ավելի բարձր է և շահող կողմ չի հանդիսանում, սակայն պահանջել են

հավելված 1.1-ի շտկում: Շտկումը կատարվել է ուղարկվել է, սակայն չի համապատասխանել Պատվիրատուի կողմից նախանշված պայմաններին: Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն հայտնել է, որ իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրն իր պարամետրերով եղել է ավելի բարձր քան պահանջվածն է: Միաժամանակ հայտնել է, որ ապրանքանիշի նշանը չի նշվել, քանի որ մակնիշի սյունակում ներկայացված է ամբողջական անվանումն ու սերիան:

Ամփոփելով՝ Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն խնդրել է ներողամիտ լինել և սխալը դիտարկել որպես անփութություն, քանի որ չհանդիսանալով ցածր գին առաջարկող, չի նշել սպասարկման կենտրոնի հասցեն:

Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 1-ին չափաբաժնի մասով, ինչպես նաև Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգով իրականացված գործողությունները արձանագրում եմ, որ Պատվիրատուն 03.07.2020թ. ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այնուհետև՝ 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ Մասնակցի կողմից անհամապատասխանությունները չշտկելու հիմնավորմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է վերջինիս հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում, որ ***Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի*** տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ***ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը***, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների***

<u>նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե</u>*** սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում ***<u>մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար</u>***: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 1-ին չափաբաժնի մասով, ինչպես նաև Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգով իրականացված գործողությունները արձանագրում եմ, որ Մասնակիցը, Կարգի 41-րդ կետի համաձայն 03.07.2020թ. ծանուցվելով, սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***<u>մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը</u>*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***<u>ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանվում է, որ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ***<u>խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:</u>***

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Արարատ Բաղալյան Սերգուշի Ա/Ձ-ն ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի

խախտում, քանի որ, 03.07.2020թ. ծանուցվելով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել, այն է՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան Ընթացակարգով նախատեսված թիվ 1.1 Հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մասնակիցների կողմից պարտադիր լրացման ենթակա հանդիսացող ապրանքի ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը:

Վերը նշված փաստերով պայմանավորված գտնում եմ, որ առկա են Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**